

ԹՈՒՐԲ-ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ
ՀԱՄԱՇԵԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ
(1913—1914 թթ.)

ԳԵՎՈՐԴ ՔԻԼԻՄՋՅԱՆ

XIX դ. վերջին և XX դ. սկզբին թուրք-հունական հարաբերությունների առանցքն էր կրետական հարցը: Առաջին րալկանյաւն պատերազմի հետեանքով Կրետե կղզին անցավ Հունաստանին և դրանով թուրք-հունական հարաբերությունների լարվածության պատճառներից մեկը վերացավ: Սակայն բալկանյան պատերազմներից անմիջապես հետո էլ թուրք-հունական հարաբերությունները շարունակում էին մնալ լարված: Դրա հիմնական պատճառը էգեյան կղզիների համար մղվող պայքարն էր, ինչպես նաև՝ Օսմանյան կայսրության մեջ բնակվող հույների հանդեպ երիտթուրքերի վարած քաղաքականությունը:

Ինչպես հայտնի է, առաջին բալկանյան պատերազմի ժամանակ էգեյան ծովի մի շարք կղզիներ, ազատագրվելով թուրքական լծից, փաստորեն դարձել էին հունական պետության բաղկացուցիչ մասը: Դրանք էին՝ փոքրասիական թերակղզու մերձակա Սամոսը, Քիոսը, Միթիլենը, նեղուցների շրջանում գտնվող ու ռազմա-ստրատեգիական բացառիկ նշանակություն ունեցող Սամոթրակիա, Իմբրոս, Լեմնոս, Թենեդոս կղզիները, ինչպես նաև՝ Թասոսը:

Թուրքական կառավարությունը չէր ցանկանում հաշտվել հիշյալ կղզիների կորստի հետ, պատճառաբանելով, որ այդպիսով հույներն անմիջական ապառնալիք են ստեղծում նեղուցների և փոքրասիական ափագծի անվտանգությունը:

Երկրորդ բալկանյան պատերազմից անմիջապես հետո երիտթուրքերը կղզիների հարցը բարձրացրին մեծ սրությամբ: 1913 թ. սեպտեմբերի 29-ին Կ. Պոլսում կնքված թուրք-բուլղարական հաշտությամբ կայսրությանը վերադարձնելով Արևելյան Թրակիան, երիտթուրքերը ամրապնդեցին իրենց դիրքերը Բալկաններում և ամբողջ ուշադրությունը դարձրեցին Հունաստանի հետ վարվող բանակցությունների վրա: Երիտթուրքերի համար նպաստավոր էր նաև քաղաքական այն մթնոլորտը, որ երկրորդ բալկանյան պատերազմից հետո ստեղծվել էր հույն-բուլղարական հարաբերություններում: Ինչպես հայտնի է, 1913 թ. օգոստոսի 10-ին կնքված Բուխարեստի հաշտությամբ Հունաստանը ստացավ Մակեդոնիայի հարավային մասը (ներառյալ նաև էգեյան ծովի կարևորագույն նավահանգիստներ Սալոնիկը և Կավալան) ու Արևմտյան Թրակիայի մի մասը: Սերբիային անցավ գրեթե ամբողջ Հյուսիսային Մակեդոնիան: Բուլղարիային մնաց Կավալայից մինչև Դեդեաղաճ ընկած էգեյան ծովափը: Մակեդոնիայի նման բաժանումը ավելի բորբոքեց հարաբերությունները մի կողմից Սերբիայի ու Հունաստանի և մյուս կողմից՝ Բուլղարիայի միջև: Նախկին զինակիցների միջև ստեղծված լարված մթնոլորտում երիտթուրքերի համար Բուլղարիան ինքնաբերաբար դառնում էր դաշնակից պետություն: Երիտ-

թուրքերը մեծ նշանակություն էին տալիս թուրք-բուլղարական համագործակցությանը: «Մեզ համար խիստ կարևոր էր դաշինքը Բուլղարիայի հետ,—նշում էր երիտթուրքական պարագլուխներից Զեմալ փաշան,—որովհետև բացահայտ էր, որ վաղ թի ուշ մենք պետք է պատերազմեինք հույների հետ: Մեզ համար լիովին անհնար էր հույներին թողնել էգեյան ծովի այնպիսի կղզիներ, ինչպես Լեմնոսը, Միթիլենը և Քիոսը: Ուստի անհրաժեշտ էր հոգ տանել, որ հույների հետ պատերազմ սկսելու դեպքում բուլղարները կրկին հանգես չգային մեր թշնամիների շարքերում: Մյուս կողմից,— շարունակում է նա,— մենք գիտեինք, որ բուլղարները չէին կարող հաշտվել Մակեդոնիայի ներկա դրության հետ և որ իրենց հավակնությունները բավարարելու համար նրանք այսպես կամ այնպես դիմելու էին մեր օգնությանը: Մենք նախատեսում էինք օգտագործել այդ պարագան, որպեսզի խուսափեինք երկրորդ բալկանյան դաշինքի իրողությունից»¹:

Թուրք-բուլղարական մերձեցման հեռանկարը երիտթուրքերին հնարավորություն տվեց Հունաստանին ահաբեկել կազմավորվող խմբավորումով: Այդ կապակցությամբ թուրքական «Թերզուման-ը հաքիթաթ» թերթը գրում էր. «Հունական կառավարությունը պետք է հասկանա, որ եթե Թուրքիան փոխհատուցման լայն հողի վրա համաձայնություն ստորագրի Բուլղարիայի հետ, ապա Հունաստանը կկորցնի ոչ միայն Կալալան ու Սալոնիկը, այլև կղզիների մի մասը»²:

Հունաստանի դեմ ստեղծվող թուրք-բուլղարական համաձայնությունը, ի վերջո, սպառնում էր հարվածի տակ դնել երկրորդ բալկանյան պատերազմից հետո Բալկաններում ստեղծված քաղաքական իրավիճակը: Այնինչ, Բալկաններում Բուլղարիայի և Թուրքիայի ռազմա-քաղաքական գերիշխանությունը չէր համապատասխանում ո՛չ Սերբիայի և ո՛չ էլ Ռումինիայի շահերին: Ուստի, այդ պետությունները հաշտ աչքով չէին կարող դիտել թուրք-բուլղարական մերձեցումը, այն գնահատելով որպես Բուխարեստի պայմանագիրը խախտելու բացահայտ միտում³:

Վերջապես, 1913 թ. նոյեմբերի 13-ին Աթենքում կնքվեց թուրք-հունական հաշտության պայմանագիրը⁴, որը վստիքացնում էր Հունաստանի նվաճումները էպիրոսում և Մակեդոնիայում: Սակայն երկու պետությունների համար էլ այդ պայմանագիրն ուներ խոցելի կողմ: Դա էգեյան կղզիների հետագա բախտի անորոշությունն էր: Զկարողանալով հասնել վերջնական պայմանավորվածության, երկու կողմերը հանգեցին կղզիների հարցը մեծ տերությունների վճռին ներկայացնելու խնդրի պայմանագրի որոշմանը:

Թուրք-հունական հաշտության պայմանագիրը Կ. Պոլսում ընդունվեց այն աստիճան բացահայտ դժգոհությամբ, որ երիտթուրքական պարագլուխները չէին ցանկանում այն ընդունել իբրև վերջնական: Թուրքական կառավարող շրջանների դժգոհությունը հիմնականում բխում էր այն մտավախությունից,

¹ Д ж е м а л п а ш а, Записки, Тифлис, 1923, стр. 55.

² «С. Петербургские ведомости», 13(30).IX.1913.

³ 1913 թ. օգոստոսի 10-ին Բուխարեստում կնքած պայմանագրով Ռումինիան, Սերբիան, Զեռնոգորիան և Հունաստանը վավերացրին երկրորդ բալկանյան պատերազմի արդյունքները և պարտավորվեցին համատեղ պաշտպանել այն:

⁴ «La situation internationale de la Grèce. 1821—1917. Recueil de documents choisis et édités par Ch. Strupp». Zurich, 1918, № CI.

որ հարցը մեծ տերությունները կարող են որոշել հոգուտ Հունաստանի, Եվրոպայի հարցը դեռևս չի լուծվել, իսկ այն մեղ համար հանդիսանում է հիմնական կենսական հարց,— գրում էր թուրքական «Իկդամ» թերթը, շեշտելով այն կարևոր նշանակությունը, որ ներկայացնում էին կղզիները Թուրքիայի համար։ Ուստի, կնքված հաշտությանը հակառակ, երկու երկրների հարաբերությունները չեն կարող անմիջապես մտնել նորմալ հունի մեջ։ Բալկանյան թերակղզում կայուն խաղաղություն կարող է հաստատվել կղզիների հարցի վերջնական լուծման դեպքում,— շարունակում էր թերթը,— և այդ հարցը պետք է լուծվի այնպես, որպեսզի երաշխավորվեն Օսմանյան կայսրության իրավունքներն ու կենսական շահերը⁵։ Կղզիների հարցի միակ լուծումը, ըստ երիտթուրքերի, օսմանյան սյուզերենության վերականգնումն էր Քիոս, Միթիլեն և Ռոդոս, ինչպես նաև վերջին երկուսի միջև գտնվող կղզիների նկատմամբ։ Երիտթուրքերը Հունաստանին էին թողնում միայն Դոդեկանեսյան արշիպելագի մնացած կղզիները՝ Սամոթրակիայով հանգերձ, Հունաստանը չէր ստանալու նաև Սամոսը⁶։

Կղզիների հարցում դրական արդյունքների հասնելու նպատակով հունական կառավարությունը որոշակի ջանքեր գործադրեց եվրոպական երկրների ռազմա-քաղաքական ու դիվանագիտական աջակցությունը ձեռք բերելու համար։ 1913 թ. վերջերին և 1914 թ. սկզբներին Հունաստանի վարչապետ է. Վենիզելոսը դիվանագիտական շրջագայություն կատարեց դեպի եվրոպական երկրների մայրաքաղաքները, այդ թվում Պետերբուրգ։ Բուխարեստում, որտեղ Վենիզելոսը համաձայնության եկավ Սերբիայի ու Ռումինիայի հետ, սերբական կառավարության ղեկավար Պաշիչը հավաստեց, որ Հունաստանի վրա որևէ տերության հարձակման դեպքում Սերբիան 1913 թ. հունիսի 1-ին կրնքված դաշինքի համաձայն կպաշտպանի իր դաշնակցին⁷։ Մյուս կողմից, ռումինական կառավարությունը հայտարարեց, որ Բուլղարիայի վրայով Հունաստանի վրա թուրքական զորքերի հարձակումը Ռումինիան կհամարի Բուխարեստի տրակտատի խախտում⁸։

Թուրքական ագրեսիան կանխելու գործում, հավանաբար, որոշ դեր խաղաց նաև ռուսական կայսրության դիրքորոշումը։ Բալկանյան պատերազմներից առաջ սկսված թուրք-գերմանական ռազմա-քաղաքական սերտ համագործակցությունը և Թուրքիայում գերմանական ազդեցության ուժեղացումը լրջորեն անհանդստացնում էին Ռուսաստանին։ Նման պայմաններում նշանակալիորեն մեծանում էր Հունաստանի դերը, որի բարեկամությունը Պետերբուրգում սկսեցին բարձր գնահատել։ Հունաստանին համարելով Թուրքիային հակակշռող ուժ, ռուսական դիվանագիտությունը շթաքնված գոհունակությամբ էր դիտում հունական ռազմածովային ուժերի աճը։ Նիկոլայ II-ին ուղղված պեկուցագրում Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սազոնովը նշում էր. «Քաղաքական տեսակետից մենք չենք կարող չհետաքրքրվել Թուրքիայի ու Հունաստանի ծովային մրցակցությամբ, և մեզ համար ցանկալի է լավա-

⁵ «С. Петербургские ведомости», 7(20).XI.1913.

⁶ „Documents diplomatiques Français“, 3-e serie, t. IX, № 142, p. 142. Boppe à Doumergue, 24. I. 1914.

⁷ «Международные отношения в эпоху империализма» (далее МО), серия III, т. I (14.I—4.VIII.1914), № 105. Арсеньев—Сазонову от 23(10) февраля 1914 г., стр. 166.

⁸ Նույն տեղում.

դույն հարաբերությունների պահպանումը Հունաստանի հետ, մանավանդ, եթե նա դառնա իրոք հզոր ժողովին տերություն⁹։ Սակայն քաղաքական մի շարք շարժառիթներ, որոնք բխում էին ուսում-բուլղարական հարաբերություններից, Ռուսաստանին հարկադրում էին տվյալ ժամանակաշրջանում խուսափել Հունաստանի հետ որևէ պարտավորեցուցիչ համաձայնագիր կնքելուց։ Այնուամենայնիվ, Պետերբուրգում Վենիզելոսին ցույց տրվեց անկեղծ ու բարյացակամ ընդունելություն, իսկ ցարը նրան հավաստիացրեց, որ Հունաստանը կարող է հուսալ Ռուսաստանի աջակցությունը բոլոր հանգամանքներում¹⁰։

1914 թ. փետրվարի 24-ին Օսմանյան կայսրության մեծ վեզիրը հունական կառավարությանը առաջարկեց ուղղակի բանակցություններ սկսել էգեյան ծովի կղզիների հարցի շուրջը, նշելով, որ բանակցությունների հիմքում դրվելու է կղզիների փոխանակության սկզբունքը։ Քիոսը, Միթիլենը և Սամոսը Օսմանյան կայսրությանը վերադարձնելու պայմանով թուրքական կառավարությունը պատրաստակամություն էր հայտնում հունական ճանաչելու արշիպելագի Փսարա, Իկարիա, Լևիտա, Աստիպալեա, Կարպատոս և Կասոս կղզիները¹¹։ Այդ առաջարկը միանգամայն անընդունելի էր Հունաստանի համար, քանի որ փոխանակման ենթակա վեց կղզիներից առաջին երկուսը մեծ տերությունների որոշմամբ արդեն տրված էին նրան, իսկ չորսը գտնվում էին իտալական օկուպացիայի ներքո և Քիոսի ու Միթիլենի համեմատությամբ բացարձակապես ոչ մի արժեք չէին ներկայացնում¹²։ Ուստի, մարտի 6-ին, հանդիպելով թուրքական դեսպանի հետ, Վենիզելոսը նշեց, որ առաջարկվող պայմանները շատ հեռու են գոհացուցիչ լինելուց¹³։

Հունական կառավարությունը պատրաստ էր երիտթուրքերի հետ բանակցել միայն կղզիների հետ առնչվող հարցերի՝ մաքսանենգության դեմ պայքարելու, հյուպատոսների փոխարեն սուլթանական կոմիսարներ նշանակելու, մահմեդական բնակչությանը հիմնավոր երաշխիքներ շնորհելու պայմանների շուրջը¹⁴։ Այդ նպատակով Հունաստանի արտաքին գործերի մինիստր Ստեյտոր ապրիլի 1-ին թուրքական դեսպան Գալիր բեյին հաղորդեց, որ հունական կառավարությունը պատրաստ է համաձայնվել լայն իրավասություններով թուրքական կոմիսար նշանակելու Քիոսում և Միթիլենում¹⁵։ Սակայն, մերժելով հունական այդ առաջարկը, մեծ վեզիրը պնդում էր կղզիները փոխանակելու իրենց տեսակետը¹⁶։

Միաժամանակ Թուրքիան շարունակում էր ունեղիստական պատրաստությունները Քիոսի և Միթիլենի վրա հարձակվելու համար։ Թուրքական մամուլը աղմկում էր կղզիների նկատմամբ Թուրքիայի ունեցած իրավունքների մասին և կոչ էր անում «շարունակելու Ադրիանապոլսի առման փառավոր քաղաքա-

⁹ Նույն տեղում, № 85. Докладная записка Сазонова Николаю II от 26(13) января 1914 г., стр. 140.

¹⁰ Նույն տեղում, № 172. Веннзелос—греческому королю от 4 февраля (22 января) 1914 г., стр. 211.

¹¹ G. Kemal bey, «Hatıraları». Istanbul, 1946, s. 154.

¹² Y. H. Bayur. Türk inkılabı tarihi, cilt 2, kısım 3, Ankara, 1951, s. 264.

¹³ G. Kemal bey, նշվ. աշխ., էջ 155.

¹⁴ Նույն տեղում։

¹⁵ Նույն տեղում։

¹⁶ Նույն տեղում, էջ 161։

կանոնությունը»¹⁷, «Հունաստանի հանդեպ թուրքական կառավարության թշնամական վերաբերմունքը շարունակվում է մնալ ավելի ուժեղ, քան երբևէ, — մարտի 19-ին հաղորդեց ռուսական զինվորական ներկայացուցիչը:— Կ. Պոլսում պատրաստ են օգտագործելու առաջին առիթը, որպեսզի պատերազմ սկսեն»¹⁸,

էգեյան կղզիները վերագրավելու նպատակով թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ իր նավատորմը վերանորոգելուն և համալրելուն: Անգլիական «Արմատրոնգ» և «Վիկկերս» ֆլումաներին պատվիրվեց վեց կործանիչ, երկու սուզանավ և նորագույն սիստեմի մեկ դրեյնուտ: Միուժամանակ, հին նավերի համար այդ ֆլումաներին պատվիրեցին ռազմանյութեր¹⁹, թուրքական կառավարությունը ռազմանավերի պատվերներ տվեց նաև ֆրանսիական ռազմական ֆլումաներին: Կառուցվելու էին վեց կործանիչ և երկու սուզանավ²⁰,

Հունական կառավարությանը առանձնապես լրջորեն էր մտահոգում թուրքական նավատորմի հետագա հզորացումը, որն իրական սպառնալիք էր ստեղծելու ոչ միայն հունական նավատորմի գերիշխանությանը, «Քանի զեռ չի պարզված կղզիների հարցը, — Աթենքի ռուսական դեսպան Դեմիդովի հետ ունեցած զրույցում հայտարարեց թագավոր Կոստանդինը, — Հունաստանը ոչ մի դեպքում չի կարող թույլ տալ թուրքական նավատորմի ուժեղացումը և չի վստահի պատերազմ հայտարարելու թուրքիային, եթե հայտնի դառնա, որ նոր ձեռք բերված թուրքական նավերը թուրքիա են ժամանելու անգամ օտար դրոշակի տակ, լինի այդ թեկուզ անգլիական կամ գերմանական: Պատերազմ հայտարարելով, Հունաստանը չորժադրելու է բոլոր ջանքերը՝ թուրքերի նոր դրեյնուտները պայթեցնելու և ոչնչացնելու նպատակով»²¹: Մյուս կողմից, 1913 թ. սեպտեմբերից հունական կառավարությունը շտապ միջոցներ ձեռնարկեց կղզիները, մասնավորապես՝ Միթիլենը, Քիոսը և Սամոսը թուրքական հարձակումից պաշտպանելու համար: Պաշտպանական մեծ աշխատանքների կատարվեցին նաև ցամաքային Հունաստանում: 1913—1914 թթ. ձմռանը հունական խոշոր ուժեր կենտրոնացվեցին Մակեդոնիայում: Հունական բանակի գլխավոր շտաբի պետ Յ. Մետաքսայի կարծիքով, արդեն 1914 թ. մարտին Հունաստանը պատրաստ էր պատերազմին²²,

1914 թ. ապրիլին Վիլհելմ II-ի Կորֆու կատարած այցելությունը Աթենքում ստեղծեց քաղաքական աշխուժության մթնոլորտ: Անմիջապես դերմանական կայսրին այցելեցին հունական թագավորական ընտանիքը, Վենիզելոսը և արտաքին գործերի մինիստր Ստրելտը: Հատկանշական է, որ Կ. Պոլսից Կորֆու ժամանեց գերմանական դեսպան Վանդենհայմը: «Այդ կանչը վկայում է այն մասին, որ այդտեղ տեսադաշտից չեն կորցնում թուրք-հունական հարաբերությունները», — հաղորդեց Աթենքի ռուսական դեսպան Դեմիդովը²³:

¹⁷ «Le Matin», 16.III. 1914.

¹⁸ Центральный государственный архив военно-морского флота (далее ЦГА ВМФ), ф. 418, оп. 1, д. № 2964, л. 20.

¹⁹ Джемал паша, նշվ. աշխ., էջ 77.

²⁰ նույն տեղում.

²¹ ЦГА ВМФ, д. № 4251, л. 22.

²² Օ. Ի. Մետաքս. Το προσεχικόν της ημερολογίου, τ. 2, 'Αθηνάι, 1956, σ. 238.

²³ МО, серия III (1914—1917), т. III, № 226, стр. 312. Демидов—Сазонову от 16(2) апреля 1914 г.

կղզում կարծիքների փոխանակմանը մասնակցելու համար Աթենքի թուրքական դեսպան Գալիբ Քեմալի բեյը խնդրեց իր կառավարության թույլտվությունը: Սակայն մարտի 26-ին մեծ վեճի և աքաղաղի. գործերի մի-նիստը Սաիդ Հալիմ փաշան հեռագրեց, որ դեսպանի ներկայությունը Կոր-ֆու կղզում նպատակահարմար չէ²⁴:

Թուրք-հունական հարաբերությունների բարելավման հարցում փորձելով ստանալ Գերմանիայի աջակցությունը, Վենիզելոսը դիմեց գերմանական կայս-րի միջնորդությանը՝ առաջարկելով Քրեստի և Միթիլենի վրա պահպանել Օս-մանյան կայսրության անվանական սյուզերենությունը: Դրանով նա հնարա-վոր էր համարում թուրք-հունական մերձեցումն ու դաշինքը, սակայն, պայ-մանով, որ կղզիների նկատմամբ ունեցած սյուզերենությունը առկախ էր լինելու այդ դաշինքի հարատևությունից: Այդ գաղտնի համաձայնությամբ Վենիզելոսը Գերմանիային ընդունում էր որպես անվերապահ հաշտարար այն բոլոր հիմնական վիճելի հարցերում, որոնք Թուրքիայի և Հունաստանի միջև կարող էին առաջանալ Արևելյան Միջերկրականում: Ուրեմն, կղզիների հար-ցին դրական լուծում տալու համար Վենիզելոսը փորձում էր ընդունել քաղա-քական նոր ուղղություն, որի նպատակն էր հույն-թուրքական դաշինքը՝ Գեր-մանիայի հովանավորության ներքո²⁵:

Կայզերական կառավարությունն իր հերթին, ցանկանալով Հունաստանը ներքաշել Ուլյակ քաղաքականության ոլորտը, ուրախությամբ ընդառաջ գնաց հունական կառավարության ծրագրին: Կ. Պոլսի գերմանական դեսպան Վան-գենհայմին ցուցում տրվեց Հունաստանի պայմանները հավանության արժա-նացնել երիտթուրքերի շրջանում²⁶: Սակայն երիտթուրքերը համաձայնվում էին հունական կառավարության հետ բանակցել միայն ամբողջ կղզիների վրա թուրքական սուվերենիտետը վերականգնելու պայմանով: Այդպիսով, Հու-նաստանի և Թուրքիայի միջև համաձայնություն կայացնելու Գերմանիայի փորձը լիովին ձախողվեց:

Թուրք-հունական հարաբերությունների լարվածության հետևանքով սաստ-կացավ հակահունական կամպանիան Օսմանյան կայսրության մեջ: Տրի-պոլիտանիայի ու Կրետեի, ինչպես նաև էգեյան ծովի կղզիների ու եվրոպական Թուրքիայի մեծ մասի կորստից հետո անվստահությունը և նույնիսկ վախը՝ դեպի Թուրքիայում բնակվող ոչ թուրք ժողովուրդները և, մասնավորապես, հունական բնակչությունը, դարձավ երիտթուրքերի ներքին քաղաքականու-թյան ելակետերից մեկը: Հայտնի է, որ Փոքր Ասիայում բնակվող հույների թիվը հասնում էր 2.452.151-ի²⁷, իսկ էգեյան ծովափում նրանք կազմում էին բնակչության 48,5%-ը²⁸: Այս հանգամանքը երիտթուրքերը սկսեցին դիտել որպես Փոքր Ասիայի ամբողջականությանը սպառնացող վտանգ: Ըստ Զեմալ փաշայի, հույները, հաղթելով բալկանյան պատերազմում և ստանալով Մակեդոնիտն ու փոքրասիական կղզիները, պետք է այժմ ձգտեն զավթել Այդընի վիլայեթը²⁹: Անհանգստության մյուս շարժառիթը Օսմանյան կայսրու-

²⁴ G. Kemali bey, նշվ. աշխ., էջ 158:

²⁵ A. F. Frangulis. La Grèce et la crise mondiale, t. I, Paris, 1926, p. 110—111.

²⁶ Նույն տեղում:

²⁷ L. Maccas. L'Hellenisme de l'Asie-Mineure, Paris, 1919, p. 86.

²⁸ Նույն տեղում, էջ 87:

²⁹ Джемалъ паша, նշվ. աշխ., էջ 59:

թյան մեջ հույների տնտեսական տեսակարար մեծ կշիռն էր: Ինչպես նշում է ժամանակակից թուրք պատմաբան Յուսուֆ Հիքմեթ Բայուրը, այդ ժամանակ «երկրի տնտեսական բնագավառում գրեթե լիովին գերիշխում էին ոչ թուրք տարրերը, հիմնականում՝ հույները»³⁰: Այդ հանգամանքը առաջ էր բերում նոր ձևավորվող թուրքական բուրժուազիայի զայրույթն ու դիմադրությունը, որը նեղէնեղ հպատակ հույն բուրժուազիայի մրցակցությունից, ձեռնարկում էր ասպարեզից դուրս մղել նրան: Երկրի կարևոր շրջաններում հունական բուրժուազիայի տնտեսական ազդեցությունը կործանելու և թուրքական մեծամասնությունն ստեղծելու նպատակով երիտթուրքերը գործնականորեն անցան հույներին զանգվածորեն տեղահանելու և արտաքսելու քաղաքականությունը: Այդ շրջաններում թուրքական մեծամասնությունն ստեղծելու նպատակով նրանք որոշեցին Բալկանյան թերակղզուց ներգաղթած թուրքերին տեղավորել խիտ հունաբնակ վայրերում, այսինքն՝ Թուրքիայի եվրոպական մասում և էգեյան ծովափում: Այդ շրջաններում թուրքական մեծամասնությունն ստեղծելու երիտթուրքերի ձգտումը բխում էր նրանց թուրքացման քաղաքականությունից: Դոկտոր Նազիմը՝ թուրքական ազգայնական շարժման հիմնադիրներից մեկը, այդ խնդրի մասին ասել է հետևյալը. «Մեծ և բարգավաճ Թուրքիա վերստեղծելու համար գոյություն ունի մեկ պարզ միջոց՝ արտաքսել օտարներին և նրանց փոխարինել զուտ թուրքական ռասայով»³¹: Նա նշում էր, որ նման քաղաքականության հետևանքով, քսան տարվա ընթացքում, իրենք կստեղծեն մի կայսրություն, որը հիմնականում բաղկացած կլինի օսմանցիներից³²: 1913 թ. հոկտեմբերից սկսվեց Թրակիայի հունական բնակչության բռնի արտագաղթը դեպի Հունաստան: Տեղական թուրքական իշխանությունները հրահանգ էին ստացել ամեն միջոց օգտագործել հույներին արտագաղթի հարկադրելու համար³³: Այդ նպատակով օգտագործվեցին հալածանքի և բռնությունից բարբարոսական բազմազան ձևեր ու միջոցներ: Հակահունական հալածանքներն ու բռնությունները լայն ժամալ ընդունեցին նաև Փոքր Ասիայի արևմտյան ծովափում, որտեղ հույների տեղահանության գործը հանձնարարված էր Զմյուռնիայում տեղակայված բանակային շորրորդ կորպուսի հրամանատար Պերթե (Դեմիրհան) փաշային, այդ կորպուսի շտաբի պետ Ջաֆեր Թայյար (Էդիմեզ) փաշային և երիտթուրքական կուսակցության տեղի պատասխանատու քարտուղար Մահմուդ Զեյալ (Բայար) բեյին³⁴: Թուրք բաշիբազուկների զինված խմբերը, հարձակվելով հունական բնակավայրերի ու գյուղերի վրա, խոշտանգում ու արտաքսում էին բնակիչներին, տիրանում նրանց բնակատեղիներին և ունեցվածքին: Հատկապես ակտիվ էին գործում Բալկանյան թերակղզուց գաղթած թուրքերը, որոնք, հենց Զեյալ փաշայի խոստովանությամբ, «ընդունն անհանգստացնում էին Այդընի վիլայեթի հույներին»³⁵:

³⁰ Y. H. Bayur, նշվ. աշխ., էջ 253:

³¹ H. Seignobosc, (Capitaine). Turcs et Turque, Paris, 1920, p. 61.

³² Նույն տեղում:

³³ Y. H. Bayur, նշվ. աշխ., էջ 251:

³⁴ „Milliyet“, 1970, 10 eylül, № 8190.

³⁵ Джемал паша, նշվ. աշխ., էջ 59:

ինչպես միշտ, քրիստոնյա բնակչության դեմ ուղղված հալածանքները վերածվեցին ջարդերի: Թրակիայում և էգեյան ծովափում հունական բազմաթիվ գյուղեր կործանվեցին, իսկ բնակիչները ենթարկվեցին ջարդի:

Կ. Պոլսի ռուսական դեսպանության թարգման Տուխուկյան, որը քննել է Զմյուռնիայի և նրա շրջակայքի հույների վիճակը, հաղորդում է հին և նոր Ֆոկեայում կատարված ջարդի մասին, ուր «կոտորվել է գրեթե ամբողջ բնակչությունը»³⁶, Հույներին արտաքսելու և նրանց բնակավայրերում մահմեդական գաղթականներին տեղավորելու քաղաքականությունն իրականացվում էր նաև Անատոլիայի հունաբնակ մյուս շրջաններում, այդ թվում՝ մերձսևծովյան վայրերում: Բնականաբար, հակահունական տրամադրություններն օգտագործվում էին նաև հայերին ճնշելու, հալածելու և կոդապտելու նպատակով:

Ջարդերից ու մասսայական արտաքսումներից զերծ մնաց միայն Կ. Պոլսի և Զմյուռնիայի քրիստոնյա բնակչությունը: Այդ կապակցությամբ թուրքական պաշտոնյան մեջ տրված է հետևյալ բնորոշ բացատրությունը. «Քաղաքական նկատառումներով Զմյուռնիայի հույների հանդեպ հալածանքներ չեղան: Զմյուռնիան չափից ավելի էր գտնվում տեսադաշտում: Նման քաղաքում մեծ տերությունների հյուպատոսների առկայությունը հարկադրում էր խուսափել արտաքսման քաղաքականությունից»³⁷:

Բորբոքելով հակահունական կամպանիա, երիտթուրքերը ցանկանում էին ճնշում գործադրել հունական կառավարության վրա՝ հարկադրելով նրան զիջումներ կատարել էգեյան ծովի կղզիների հարցում: Դեռևս 1914 թ. հունվարին Աթենքի թուրքական դեսպանը սպառնաց, որ հունական կառավարության դրսևորած համառությունը կարող է տխուր հետևանքներ ունենալ ինչպես Հունաստանի, այնպես էլ Օսմանյան կայսրության սահմաններում բնակվող հույն բնակչության համար³⁸: Միաժամանակ, երիտթուրքերը վերսկսեցին հակահունական տնտեսական բոյկոտի քաղաքականությունը, գտնելով, որ թուրքական բուրժուազիային մրցակցությունից ազատելու և գործունեության լայն ասպարեզ ստեղծելու համար անհրաժեշտ էր՝ «նախ և առաջ սնանկացնել, կործանել տնտեսապես հզորացած հունական բուրժուազիային»³⁹: 1913 թ. վերջերին և 1914 թ. Թուրքիայում հակահունական տնտեսական բոյկոտը հասավ մեծ չափերի: Այն շատ հեշտությամբ վերածվում էր ուղղակի կոդապտի:

Տնտեսապես սնանկացած ու կոդապտված քրիստոնյա բուրժուազիայի փոխարեն երիտթուրքերը հույս ունեին բարձրացնելու թուրքական ազգային բուրժուազիային: էգեյան ծովափում առաջացան թուրքական բանկեր և ակցիոներական ընկերություններ⁴⁰: Երիտթուրքերը նոր բարձրացող թուրք բուրժուազիայի համար կուտակեցին դրամական նշանակալի միջոցներ: Արդեն 1914 թ. գարնան վերջերին դրանք հասան 10 հազար լիրայի⁴¹: Սակայն բոյկոտի քաղաքականությամբ թուրք բուրժուազիայի տնտեսական դիրքերը բարելավելու և ուժեղացնելու ջանքերը ձախողվեցին, քանի որ տնտեսական

³⁶ ЦГА ВМФ, ф. 418, оп. 1, д. № 4261, л. 201.

³⁷ „Milliyet“, 1970, 10 eylül, № 8190.

³⁸ G. Kemal bey, նշվ. աշխ., էջ 144.

³⁹ „Milliyet“, 1970, 6 eylül, № 8186.

⁴⁰ „Milliyet“, 1970, 9 eylül, № 8189.

⁴¹ „Journal de St. Petersbourg“, 25. V. (7. VI). 1914.

բնագավառում թուրքերի տեսակարար կշիռը մեծացնելու փոխարեն, — նշում է Բայուրը, — բոյկոտը ավելի շուտ ծառայեց որպես զոռքաների հարստացման ժամանակավոր միջոց»⁴²:

Հակահունական հալածանքները արտակարգ հուզմունք առաջացրին Հունաստանում, 1973 թ. մայիսի 29-ին Վենիզելոսը խորհրդակցության հրավերեց հունական զլիավոր շտաբի ներկայացուցիչներին, որտեղ քննարկվեց Թուրքիային պատերազմ հայտարարելու հնարավորությունը: Հուլյն վարչապետի կարծիքով հակահունական հալածանքների շրջանում պատերազմ հայտարարելով Թուրքիային, Հունաստանը կշահեր եվրոպական հանրային կարծիքը և հայրենասիրական զգացմունքների պոռթկում կառաջացներ հուլյն ժողովրդի ամենալայն շրջաններում: Բացի այդ, հունական կառավարությունը ցանկանում էր սկսել պատերազմը, քանի դեռ Թուրքիան չէր խախտել ուժերի հարաբերակցությունը ժողովում⁴³:

Թուրք-հունական ռազմական նախապատրաստությունները կատարվում էին Սարաևոյի ճգնաժամի շրջանում: Հենց այդ ժամանակ, երիտթուրքերի նախաձեռնությամբ, սկսվեցին գերմանա-թուրքական բանակցությունները: Թուրքիան, որպես դաշնակցության պայման, առաջ էր քաշում նաև էգեյան ծովի բոլոր կղզիներն իր տիրապետության տակ դնելը⁴⁴, Սրբ հուլիսի վերջին հայտնի դարձավ, որ Ռուսաստանը անխուսափելիորեն մասնակցելու է պատերազմին, կայզերական Գերմանիան որոշեց անհապաղ համաձայնվել Թուրքիայի պայմանների հետ: Օգոստոսի 2-ին կնքվեց գերմանա-թուրքական խիստ զաղտնի դաշինքը, որին տեղյակ չէր թուրքական կառավարության անդամների մեծամասնությունը: Օգոստոսի 4-ին, երբ պատերազմի մեջ մտավ նաև Անգլիան, երիտթուրքերը նոր պահանջներ ներկայացրին Վանզենհայմին: Նրանց հավակնություններն Արևմուտքում տարածվում էին Բալկանյան թերակղզու, ինչպես նաև էգեյան ծովի բոլոր կղզիների վրա⁴⁵: Օգոստոսի 6-ին Գերմանիան ձևականորեն ընդունեց երիտթուրքերի նոր պայմանները: Հունաստանին վերաբերող կետում նշված էր, որ այդ երկրի պարտության դեպքում Գերմանիան ջանքեր կգործադրի, որպեսզի էգեյան ծովի կղզիներն անցնեն Թուրքիային⁴⁶, Պատերազմի սկզբնական շրջանում քողարկվելով «չեզոքության» դիմակով, երիտթուրքերը ստեղծում էին Հունաստանի հետ համաձայնության գալու պատրանք: Այսպես, օգոստոսի 8-ին մեծ վեճերը Աթենքի իր դեսպանին հրահանգեց վերսկսել բանակցությունները հունական կառավարության հետ: Նույնիսկ Բայուրն է նշում, որ դա ամի խաբեություն էր, քանի որ թուրքական կառավարող շրջանները առաջին համաշխարհային պատերազմի հետագա ընթացքին սպասելը ավելի ձեռնտու էին համարում⁴⁷:

Իրենց բախտը կապելով Եռյակ դաշինքի հետ, երիտթուրքական կառավարող շրջանները հաստատուն կերպով նպատակադրվել էին մասնակցել համաշխարհային պատերազմին՝ իրականացնելու իրենց զավթողական պլանները Արևմուտքում և մանավանդ՝ Արևելքում:

⁴² Y. H. Bayur, նշվ. աշխ., էջ 253:

⁴³ Օ. 'I. Μεταξάς, նշվ. աշխ., էջ 244—245:

⁴⁴ E. Φ. Λυδshueйт, Турция в годы первой мировой войны, М., 1966, стр. 26.

⁴⁵ Նույն տեղում, էջ 31:

⁴⁶ Նույն տեղում, էջ 33:

⁴⁷ Y. H. Bayur, նշվ. աշխ., էջ 274:

ТУРЕЦКО-ГРЕЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ НАКАНУНЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ (1913—1914 гг.)

ГЕВОРГ КИЛИМДЖЯН

Резюме

Потеряв в результате Балканских войн огромную часть прежних владений, Эгейский архипелаг и остров Крит, Турция готовилась к реваншу с Грецией. Она преследовала цель возвратить Эгейские острова, имеющие исключительно важное стратегическое значение для защиты Эгейского побережья.

Одновременно младотурецкое правительство проводило массовую высылку греков, проживавших в Турции, особенно в Восточной Фракии и на Эгейском побережье Малой Азии.

Военно-политический союз с Германией, заключенный младотурецкими лидерами, отчасти способствовал осуществлению агрессивной, захватнической политики в отношении Греции.